

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Միտելի՛ հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:



Դատարան դիմելու դեպքում Ձեր և Ընկերության միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:



Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և Ընկերության միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն անվճար են:


Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք Ընկերությանը: Ընկերությունը պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: Ընկերության պատասխանը ստանալուց հետո Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոք ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր և Դուք չեք ստացել Ընկերության պատասխանը, կամ
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը), կամ
3. Ընկերության պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս, կամ
4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից առաջ:



Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:




**Ֆինանսական համակարգի
հաշտարարի գրասենյակ**

Հաշտարար՝ Փիրուզ Մարգարյան.....
Հասցե՝ ք. Երևան, Մ. Խորենաց 15, 7-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 582321, 582322.....
Էլ. հասցե՝ info@fsm.am.....
Ֆաքս՝ (+374 10) 582421.....



Միքելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ Առաջին հիփոթեքային ընկերություն ՈՒՎԿ ՍՊԸ հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ ընկերությունը չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ընկերության դեմ կայացված որոշումները, այն պահանջների մասով, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 250.000 ՀՀ դրամը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500.000 ՀՀ դրամը

Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և Ընկերության միջև վեճերը, սակայն կարող է Ընկերության նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ Ընկերությունը խախտել է օրենքի պահանջները:



ՀՀ Կենտրոնական բանկ

Հասցե՝	Ք. Երևան, Վ. Սարգսյան 6.....
Հեռ.՝	(+374 10) 583841, 592697.....
Էլ. հասցե՝	mcba@cba.am.....
Ֆաքս՝	(+374 10) 523852.....
կայք՝	www.cba.am.....